# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2022/139**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6788-2022 գրությամբ «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 05.04.2022թ. թիվ ԵԱՍՄ/85 և 12.04.2022թ. թիվ ԵԱՍՄ/103 գրությունների հիման վրա, 19.04.2022թ. թիվ 26/26-1/6788-2022 գրությամբ նախաձեռնել է «Խաչմիք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Խաչմիք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/139 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:20-ին և 13.06.2022թ. ժամը 10:39-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.04.2022թ. ԵԱՍՄ/85 և 12.04.2022թ. թիվ ԵԱՍՄ/103 գրություններով, մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/7» ծածկագրով ցախավելների և աղբի համար նախատեսված պոլիէթիլենային տոպրակների ձեռքբերման ընթացակարգին հակադարձ աճուրդի արդյունքում առաջին և երկրորդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից էր ճանաչվել «Խաչմիք» ՍՊԸ-ն, սակայն մասնակցի մոտ առկա էր փաստաթղթերի անհամապատասխանություն՝ հայտի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում էր առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը և լրացված չէր տեխնիկական բնութագիրը, բացակայում Հավելված 1-ի էլեկտրոնային ստորագրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.2:

Համաձայն Կարգի 41-րդ կետի՝ 30.03.2022թ. նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվել շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները և սահմանված կարգով ներկայացնել շտկված փաստաթղթերը մինչև նիստի կասեցման ավարտը: Սահմանված կարգով և ժամկետում «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթեր չեն շտկվել և ներկայացվել:

Վերոգրյալից ելնելով՝ խնդրում եմ Ձեզ նախաձեռնել ընթացակարգ վերոհիշյալ ընկերությանը ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

Կից ներկայացվում են «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից համակարգում կցված փաստաթղթերի և գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրության պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/139 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:20-ին և 13.06.2022թ. ժամը 10:39-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2022/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կարիքների համար հայտարարվել է «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Խաչմիք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ հայտի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը և լրացված չէ տեխնիկական բնութագիրը, բացակայում է Հավելված 1-ի էլեկտրոնային ստորագրությունը և իարկան շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.2 և որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ արձանագրել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

**<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6788-2022 գրությունը, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 05.04.2022թ. ԵԱՍՄ/85 և 12.04.2022թ. թիվ ԵԱՍՄ/103 գրությունները՝ կից փաստաթղթերով, Ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

***ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ <u>գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է</u> պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ <u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված***

***պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 11-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

***Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կարիքների համար հայտարարվել է «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Խաչմիք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ հայտի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը և լրացված չէ տեխնիկական բնութագիրը, բացակայում է Հավելված 1-ի էլեկտրոնային ստորագրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.2 և որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու

վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ արձանագրել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «Խաչմիք» ՍՊԸ-ն «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6788-2022 գրությամբ «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**